

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ «ՆԵՐՍԻՍՅԱՆ»
ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ



REPUBLIC OF ARMENIA
ARMAVIR MARZ VAGHARSHAPAT
NERSISYAN N 6 PRIMARY SCHOOL
SNCO

Քաղ. Էջմիածին
Մ. Խորենացի 101
Հեռ. 060860213
Էլ. Հասցե-vargaran@mail.ru

114
02. 05. 2023թ.

City Echmiadzin
M. Khorenatsi 101
Tel. 060860213

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Է. Հովհաննիսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Վաղարշապատի «Ներսիսյան» թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարել է մրցույթ՝ Ֆիզկուլտուրա /14 դասաժամ/ և Ինֆորմատիկա /8 դասաժամ/ առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար: Կից՝ ուղարկում եմ հայտարարության տեքստը:



Տնօրեն՝

/Ս.Ենգիբարյան/

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ներսիսյան» ՊՈԱԿ-ի Ֆիզկուլտուրա (14 դասաժամ), Ինֆորմատիկա (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 02.05.2023թ-ից մինչև 18.05.2023թ-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մայիսի 24-ին՝ ժամը 14:00-ին**, «Ներսիսյան» թիվ 6 հիմնական դպրոցում, հասցե՝ Սուրբ Մ.Խորենացի 101 : Տեղեկությունների համար զանգահարել 060 86 02 13 հեռախոսահամարով: